ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 09

05 հունվարի 2024 թվականի N – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի

ո ր ո շ ու մ ե մ.

1. Կրթության որակի և բովանդակության նկատմամբ բարձր պատասխանատվության և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական ուսումական հաստատություններին՝ համաձայն հավելվածի:
2. Թատերական ոլորտի զարգացման և բարձր արդյունքների ապահովման, ակտիվ ստեղծագործական գործունեության, հյուրախաղային գործունեության զարգացման համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել «Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Տարբեր մրցաշարերում գրանցված հաջողությունների, ըմբշամարտի հանրապետական և միջազգային մրցաշարերում գրանցված բարձր ցուցանիշների, հաղթանակների և նվաճած մեդալների համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. հունվարի 05
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
«5» հունվարի 2024թ.
N 09 - Ա որոշման

Անվանացանկ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրվող կրթության որակի և բովանդակության նկատմամբ բարձր պատասխանատվության և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների

Հ/հ	Հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանում
1	«Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ
2	«Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
3	«Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
4	«Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
5	«Սիսիանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
6	«Գորիսի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան